ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ XIV—XV ԴԴ.

Գ. Ե. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն դառնալուց հետո կազմավորվող հայ եկեղեցին աստիճանաբար իր տրամադրության տակ կենտրոնացրեց հսկայական տարածությամբ հողային կալվածքներ։ Նախնական շրջանում եկեղեցին իր կալվածքներն ընդարձակում էր հեթանոսական տաճարներից և քրմերից խլված հողերի, իսկ հետո՝ Արշակունի և Բագրատունի գահակալների և հայ աշխարհիկ ֆեոդալների հատկացումների հաշվին[1]։ Հետագայում եկեղեցին տարբեր ճանապարհներով՝ գնումների, նվիրատվությունների, գյուղական համայքներից և մանր հողատերերից հողերի բռնագրվաման, ասպարեզից հեռացած ֆեոդալների հողերին տիրելու և զանազան այլ միջոցներով ընդլայնում է իր հողային տիրույթները և շուտով դառնում երկրի ամենախոշոր հողատեր-կալվածատերը։

Ֆրիդրիխ Էնգելսը, խոսելով եկեղեցու դերի մասին, գրում է. «Նա ֆեոդալական հասարակարգը շրջապատեց աստվածային շնորհի սրբազան փայլով։ Նա իր սեփական նվիրատվությունը հաստատեց ֆեոդալական օրինակի համաձայն, և վերջիվերջո նա ամենախոշոր ֆեոդալական սեփականատերն էր»[2]։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում եկեղեցու կալվածքների ընդլայնման հիմնական աղբյուրն աշխարհիկ ֆեոդալների կողմից տրվող նվիրատվություններն էին։

Ի՞նչն էր պատճառը, որ հայ աշխարհիկ ֆեոդալներն իրենց կալվածքները նվիրում կամ երբեմն էլ էժանագին վաճառում էին վանքերին ու եկեղեցիներին։ Այս երևույթի հիմնական պատճառը այն հալածանքն էր, որն սկսվել էր աշխարհիկ ֆեոդալների նկատմամբ։ Մոնղոլ-թուրքական երկարամյա տիրապետությունը կործանարար եղավ հայ իշխանական տների համար։ XIV—XV դդ. իրենց քաղաքական ազդեցությունից զրկվեցին երբեմնի հզոր Զաքարյան, Օրբելյան, Վաչուտյան, Պռոշյան, Դոփյան և այլ իշխանական տները։ Հայ աշխարհիկ ֆեոդալների կալվածքների մի մասը բռնագրավվեց նվաճողների կողմից, իսկ մնացած մասը նրանք ստիպված էին նվիրել կամ էլ էժանագին վաճառել եկեղեցուն։

Ի հակակշիռ քայքայվող աշխարհիկ հողատիրության, XIV—XV դդ. որոշակի զարգացում ապրեց հոգևոր ֆեոդալական հողատիրությունը։ Այս հանգամանքը բացատրվում է բարյացակամ այն վերաբերմունքով, որ ունեին նվաճողները հայ հոգևորականության նկատմամբ։ XIV—XV դդ. հայ եկեղեցին շարունակում էր պահպանել իր արտոնյալ վիճակը։ Փաստերը վկայում են, որ

---

[1] *Այս մասին տե՛ս Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, Ե., 1957, էջ 191—210։*

[2] *Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, Ե., 1933, էջ 13։*

XV դ. թուրքմեն դահակալներն իրենց վարած քաղաքականությամբ մեծապես նպաստում էին վանքապատկան հողատիրության ընդարձակմանը։ 1941 թ., երբ հայոց կաթողիկոսական աթոռը Սսից փոխադրվեց, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին, Ջահանշահը և Երևանի կառավարիչ Յաղուբ բեկը օժանդակեցին, որպեսզի կաթողիկոսական աթոռը հաստատվի էջմիածնում[3]։

Թուրքմեն փադիշահներն թեմերի առաջնորդներին ու վանահայրերին տված իրենց հրովարտակներով ոչ միայն հաստատել են վանքերի հողատիրական իրավունքները, այլև վանքապատկան հողերը ազատել են հարկերից։ Հայտնի են Ջահանշահի 1449 թ. հրովարտակը՝ տրված Տաթևի և Վազաղինի վանքերին, 1462 թ. Ջահանշահի կին Բեկում Խաթունի հրամանագիրը՝ տրված Դանձասարի Հովհաննես կաթողիկոսին, 1468 թ. Հասան Ալու հրովարտակը՝ Տաթևի և Վազաղինի վանքերին, 1475 թ. Ուզուն-Հասանի հրովարտակը՝ Դարշարի հայ հոգևորականներին և 1478 թ. Յաղուբի հրովարտակը՝ տրված Դանձասարի Հովհաննես կաթողիկոսին։

Բերված փաստերը վկայում են, որ XIV—XV դդ. վանքապատկան հողատիրությունը զերծ էր օտարումից ու հափշտակումից և ազատ՝ պետական հարկերից։ Այդ երևույթը հատուկ էր ֆեոդալական հասարակարգին՝ մանավանդ Արևելքում։ Հոգևորականությունը որպես տիրող դասակարգ վաղ միջնադարից գտնվել է արտոնյալ վիճակում։ Քննարկվող ժամանակաշրջանում, ինչպես բոլոր նվաճողները, այնպես էլ թուրքմենները, որպեսզի ապահովեին իրենց թիկունքը, որոշ արտոնություններ էին տալիս հոգևորականությանը։

Զուտ տնտեսական, քաղաքական ակնկալումներից բացի, մահմեդական տիրակալները շարիաթի սկզբունքները տարածում էին վանական հողային տիրույթների վրա և նրանց օժտում «մուաֆիթ» իրավունքով։

Աշխարհիկ ֆեոդալների նվիրատվությունները հիմնականում տրվում էին այն վանքերին, որոնք գտնվում էին նվիրատուի ֆեոդալական տիրույթների սահմաններում, իսկ վանահայրը՝ ֆեոդալի մերձավոր ազգականն էր կամ էլ նրա ենթական։ Հաճախ ֆեոդալական տան որևէ ազդեցիկ անդամ իր ձեռքն էր վերցնում ֆեոդալական տան աշխարհիկ և հոգևոր իշխանությունը։ Ֆեոդալական տան այն ազդեցիկ ներկայացուցիչները, որոնց ձեռքում էր կենտրոնացած թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր իշխանությունը, կոչվում էին պարոն-տերեր.

Եթե մինչև թուրք-թաթարական արշավանքները կատարված նվիրատվությունները հիմնականում կրում էին կրոնական բնույթ, այսինքն բխում էին նվիրատուի կրոնական ջերմեռանդությունից և տրվում էին «հոգու փրկության» համար, ապա մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, քաղաքական նոր պայմանների հետևանքով փոխվեցին նվիրատվությունների նպատակն ու բնույթը։ Այժմ կատարված նվիրատվություններն ունեին իրենց քաղաքական դրդապատճառները։ Դրանք վարագուրում էին նվիրատուի բուն նպատակը և պատվարում նրաց կալվածքները վանքապատկան ցուցանակով[4]։

Նվիրատվական արձանագրությունները փաստորեն պայմանագրեր են՝ կնքված վանքի միաբանության և նվիրատուի միջև, որի դիմաց վանքի միա-

---

3 Տե՛ս Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, Թիֆլիս, 1896, էջ 68—69։

4 Տե՛ս Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Ե., 1958, էջ LXII։

բանությունը յուրաքանչյուր տարի պատարագ պիտի մատուցեր նվիրատուի արևշատության համար[5]։ Բերենք մի քանի փաստեր։

XIV—XV դդ. բավական ընդարձակ կալվածքների տեր էր Թանատի վանքը։ Վանքի իր մի արձանագրությունում Վահրամ Շահուռեցի իշխանը հայտնում է. «տվի... Տափոց հողերն սբ. Ստեփանոսին», իսկ 1336 թ. Վահրամի որդի Ուքանը գրել է. «Ետու հալալ հերենեց որ ինձ բաժին էր հասել ղխալին Ըղալանին հողերն իւր։ Դ։ հատովն եւ թմբերովն»[6]։ Վանքը ոչ միայն հողային կալվածքներ և այգիներ էր ձեռք բերում, այլ նաև ջրաղացներ, դինգեր և այլ հասութաբեր օբյեկտներ։ Էաչի իշխանի որդին՝ Ջուման եկեղեցուն է նվիրել մի ջրաղաց[7]։

Օրբելյան իշխանազուններից Պենը, Փանձաթաղի տերը, 1348 թ. իր կնոջ՝ Սուսայի, հետ վանքին է նվիրել երկու այգի[8]։ Ոմն Բուբայիս XIV դ. առաջին կեսին վանքին է նվիրել «զՋատինաց վարին հողն»։ Իվանի անունով մեկը իր կնոջ՝ Սախուխի, հետ 1353 թ. արձանագրել են. «...տվիք զմեր գնած իգին ի Սխտորալէզ։ Ա։ հող ի Մեծաքարա»[9]։

Վայոց ձորի նշանավոր վանքերից է Սպիտակավոր հոյակերտ վանքը։ Պռոշյան իշխանների հատկացումներով, վանքը շուտով ձեռք է բերում հսկայական հողային տիրույթներ։ 1322 թ. վանքի կառուցումը ավարտելու կապակցությամբ Ամիր-Հասան Բ-ը հողամաս է նվիրել վանքին և իր հոր անունով թողել է արձանագրություն[10]։ 1339 թ. Ամբատ Օրբելյանը վանքին է նվիրել մի այգի և այն ազատ է համարել ամեն տեսակ հարկերից[11]։ Անթվակիր մի արձանագրությունից, որը, ըստ Ս. Բարխուդարյանի, գրված է XIV դ. առաջին կեսին, իմանում ենք, որ Մարուգե վարդապետը և նրա հարազատ Գրիգորը իր կնոջ հետ Աստվածածնի վանքին են նվիրել Թաջերի հողամասը, Թեղուտը և Ջետին հողերը[12]։ Սպիտակավոր վանքի Աստվածածնի եկեղեցու գավթի անթվագիր մի արձանագրությունից իմանում ենք, որ 1475—1498 թթ. միջոցում, երբ վանքի վանահայրն էր Ավագտեր վարդապետը, Սյունյաց երեց Ստեփանոսի որդի Հովհաննեսը վանքին է նվիրել երկու այգի[13]։

Սյունիքում խոշորագույն հոգևոր ֆեոդալական կազմակերպություններից էր Տաթևի վանքը։ Համաձայն Ստ. Օրբելյանի, Տաթևի վանքին հարկատու էին վեց հարյուր յոթանասունյոթ գյուղեր։ Տաթևի վանքի զավթում մի քարի վրա ոմն Գրիգոր արձանագրել է, որ ինքը 1345 թ. իր հողամասը նվիրել է վանքին[14]։ 1397 թ. Գրիգոր վարդապետը գնել է մի ջրաղաց, ինչպես նաև «Ցուրահողը» և նվիրել է վանքին[15]։

---

5 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957, էջ 74։

6 Դիվան հայ վիմագրության, կազմեց Ս. Բարխուդարյան, հ. 3, 1967, էջ 80։

7 Տե՛ս նույն տեղում։

8 Տե՛ս նույն տեղում, էջ 81։

9 Նույն տեղում, էջ 82—83։

10 Տե՛ս նույն տեղում, էջ 96։

11 Տե՛ս նույն տեղում, էջ 98։

12 Տե՛ս նույն տեղում, էջ 96։

13 Տե՛ս նույն տեղում, էջ 101։

14 Տե՛ս նույն տեղում, էջ 87։

15 Տե՛ս նույն տեղում, էջ 41։

Ճիշտ է, XIV—XV դդ. սակավ վկայություններ են հասել մեզ Տաթևի հողային կալվածքների վերաբերյալ, բայց և այնպես վանքը շարունակել է պահպանել իր տնտեսական հզորությունը և անբավ հարստությունները նաև այս դարերում։ Այդ են վկայում XV դարից վանքի մասին մեզ հասած կալվածագրերը։ Այսպես, 1400 թ. գրված Տաթևի վանքապատկան խոտ, Շենուհայր և Հալիձոր գյուղերի սահմանը որոշող կալվածագրում մանրամասն նկարագրված են այն սահմանները, որոնք մտնում են այս գյուղերի տերիտորիայի մեջ և միշտ պատկանել են Տաթևի վանքին[16]։ Պահպանվել են նաև 1450 թ. կալվածագրերը, որոնց համաձայն Տաթևի վանքի առաջնորդ, անգեղակոթցի Շմավոն վարդապետը Ռուստամ Օրբելյանից գնել է Սվարի և Տանձատափի գյուղերի վնց, Տաղու և Աղանց գյուղերի երեք դանգերը, ինչպես նաև ոմն Ղազանֆարից գնել է Կոծմակոթի վնց դանգը, Փիրկուլիից՝ մի այգի և այդ բոլորը նվիրել է Տաթևի վանքին։ Այս ամենի դիմաց Շմավոն վարդապետը վճարել է Ռուստամ Օրբելյանին 14 հազար դինար[17]։ Այդ բոլոր կալվածագրերը, Շմավոն վարդապետը վակֆ է արել Տաթևի վանքին, որի կալվածքներն օտարումից ազատ էին։ 1508 թ. գրված մի կալվածագրից իմանում ենք նաև, որ Շմավոն վարդապետը (հավանաբար սա եղել է Շմավոն Անգեղակոթցու թոռը) վանքին վակֆ է արել 16 գյուղ՝ Տաթև, Սվարի, Տաղու, Աղաքյանդի, Տանձատափ, Խոտանան, Հալիձոր, Շնհեր, Խոտ, Կից, Բորդի, Դաստակերտ, Գյուլյազի, Բնունիս, Թաս և Ղարաքիլիսա[18]։ Կարծում ենք, որ սա ոչ լրիվ ցուցակն է այն գյուղերի, որոնց XV դ. տիրում էր Տաթևի հոգևոր ֆեոդալական հաստատությունը։ Այս գյուղերից բացի վանքին գյուղեր, այգիներ, արոտատեղիներ, ջրաղացներ և այլ հասութաբեր օբյեկտներ են նվիրել տարբեր մարդիկ, տարբեր ժամանակներում։ Նշված կալվածքների ողջ արդյունքը յուրացվում էր վանքի միաբանության կողմից, որը կատարվում էր գյուղացիությանը շահագործելու ճանապարհով։ Այս մասին 1508 թ. կալվածագրում կարդում ենք. «Վանքի վանահայրերը, վանականներն ու եպիսկոպոսները վերոհիշյալ գյուղերի մուլքերի բարհաշվեներից ստացվող հասույթը ամեն տարի գյուղերի մուլքերի հողագործներից ստանան և գանձվող ամբողջ մալիքանեն ծախսեն հիշյալ աղոթատեղում բնակվող կարոտյալների (վանականներ) ապրուստի և ելումուտ անողների վրա»[19]։

Բավական ընդարձակ տնտեսություն ուներ Վաղադինի վանքը, որը գտնվում է Սիսիանի Վադուղի գյուղից երկու կիլոմետր հեռու։ Իր հիմնադրման ժամանակից վանքը տիրում էր ընդարձակ կալվածքների։ XIV դ. թուլացող Օրբելյան ֆեոդալական տան ներկայացուցիչներն իրենց կալվածքների ապահովումը լծորդում էին նաև այս վանքի հետ։ 1326 թ. Սյունյաց արքեպիսկոպոս Ջալալի որդի Ստեփանոս Օրբելյանը եկել է Վաղադինի վանքը և վանքին կից նոր հյուրատուն կառուցելու կապակցությամբ վանքին է նվիրել երեք կտոր հողամաս և ազատ հայտարարել այն հարկերից[20]։

---

16 Տե՛ս Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ I, կազմեց Հ. Փափազյան, Ե., 1969, էջ 56։

17 Տե՛ս նույն տեղում, էջ 79—80։

18 Տե՛ս նույն տեղում, էջ 100—102։

19 Նույն տեղում, էջ 102—103։

20 Դիվան հայ վիմագրության, Ե., 1960, հ. 2, էջ 100—101։

XV դ. Վաղադինի վանքը շարունակում էր տիրել ընդարձակ կալվածքներ։ Այդ հաստատում են 1449 թ. Ջահանշահի և 1466 թ. Հասան Ալու կողմից Շմավոն վարդապետին տրված հրովարտակները՝ Տաթևի և Վաղադինի վանքերի հողային տիրույթների և նրանց հարկերից ազատելու մասին։

Ընդարձակ տնտեսություններ ունեին Դոփյանների իշխանության տակ գտնվող Դադի և Խաթրա վանքերը։ Այդ հոգևոր կենտրոնները XV դ. շարունակում էին անսահմանափակ կերպով ընդլայնել իրենց կալվածքները։ Դրան մեծապես նպաստում էր այն հալածանքը, որ սկսվել էր ֆեոդալական այս տան նկատմամբ։ XV դ. 20—30-ական թվականներին իշխող Տուրսուն, Սեյդի, Պռոշ, Գրիգոր, Հասան և մյուս իշխանազունները, տեր Ավագ եպիսկոպոսին և Մանվել աբեղային են հանձնել Դադի, Խաթրա և Գետամեջ վանքերի ու նրանց կալվածքների կառավարման գործը. «զերկու իշխանութիւնն որ է եպիսկոպոսութիւնն և պարոնութիւնն՝ էլ հենց ի նոսա յանձնեցաք»[21], արձանագրել են Դոփյան իշխանազունները։ Այս փաստը թուլացած աշխարհիկ իշխանների կողմից հոգևոր ֆեոդալների հովանավորությունն ընդունելու բնորոշ օրինակ է։

Արցախում տասնյակ գյուղերի, արտերի, այգիների և անբավ այլ հարստությունների տեր էր Գանձասարի վանքը։ Գանձասարի վանքի կալվածքների ընդարձակումն ավելի մեծ չափով շարունակվեց XV դ.։ Ջալալյան իշխաններն իրենց կալվածքներն օտարումից փրկելու նպատակով դրանք նվիրում էին վանքին, որի կաթողիկոսներն ու վանահայրերն իրենց մերձավոր ազգականներն էին։ Օրինակ, 1407 թ. Ջալալյան Ուլուբեկ իշխանը Գանձասարի վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ արձանագրել է. «Ես Ուլուբէկս որդի ՄէՀլիսին. տուի զիմ հայրենի հողն Ղուղտանոսի կտորն, որն ի Վարդան Բերանց է, իւր սարհատովն ի սբ. ուխտս Գանձասարայ»[22]։ Նման օրինակները բազմաթիվ են։

XIV—XV դարերում մեծ տնտեսություններ ունեին նաև Վասպուրականի վանքերից մի քանիսը։ Ախթամարում և Լիմում նստող վանահայրերը ծագում էին Արծրունիների հին տոհմից։ Նրանք XIV—XV դարերում իրենց ձեռքում էին կենտրոնացրել այս շրջանի թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր իշխանությունը և շարունակում էին ընդարձակել իրենց ֆեոդալական տիրույթները։ Մեզ է հասել Լիմի ս. Գևորգ վանքի վանքապատկան հողերի 1305 թ. կալվածագիրը։ Ըստ այդ կալվածագրի՝ Զաքարիա կաթողիկոսին հաջողվում է զանազան գյուղերից ձեռք բերել ընդարձակ կալվածքներ և դրանք վակֆ անել վանքին։ Այսպես, նա վանքին է տվել Ամյուկին ենթակա Ջանիկի դաշտից երկու հողակտոր, Նորաշեն գյուղում՝ հինգ հողակտոր և մեկ ջրաղաց[23]։ Համաձայն հիշյալ կալվածագրի, Լիմի ս. Գևորգ վանքն ուներ քսան կտոր ընդարձակ հողամաս, երկու ջրաղաց և մեկ ջրանցք։ Այս ամենը «վակֆ են արված և վերջնականապես, ընդմիշտ և հավիտյանս պարզ ու լսելի կերպով ամրացված են Լիմի հիշյալ եկեղեցուն»[24]։

---

21 Հ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառաց Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842, էջ 350։

22 Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 171։

23 Տե՛ս Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պ. I, էջ 49։

24 Նույն տեղում, էջ 52։

Խառարաստի վանքը Ղարա-Յուսուֆի իշխանության տարիներին ընդարձակ կալվածքների տեր էր, որի ֆեոդալական տնտեսությունն էին կազմում 19 արտ, 70 մոթ ջրովի հող, 20 մոթ անջրդի հող, մի այգի և երեք ջրաղաց[25]։

Մեկ հետաքրքրող ժամանակաշրջանում վանքապատկան հողատիրության ընդլայնման մյուս ուղին գնումների ճանապարհով ձեռք բերված կալվածքներն էին։ 1445 թ. Աղթամարում գրված մի Մաշտոցում արժեքավոր վկայություն կա Ռշտունյաց գավառում կառուցվող եկեղեցիների և գնումների ճանապարհով նրանց համար ձեռք բերված հողերի մասին[26]։

Գնումների ճանապարհով վանական հողատիրության հարստացման մասին է խոսվում նաև Աղթամարի կաթողիկոսական տեղապահ Ներսես եպիսկոպոսի 1463 թ. երկու կոնդակներում։ Կոնդակներից մեկում, ուղղված իր թեմի հոգևոր հայրերին, նա խնդրում է, որ նրանք օժանդակություն ցույց տան ավերված ս. Խաչ վանքը վերաշինելու գործին։ Իր մյուս կոնդակով Ներսես եպիսկոպոսը հայանում է, որ վանքին մոտ մի գյուղ է եղել, որը գյուղի տերերը վաճառել են վանքին 1000 թանկայի։ Փողի կեսը վանքը վճարել է կանխիկ, իսկ մյուս մասը Ներսես եպիսկոպոսի խնդրանքով վճարել են քրիստոնյա հավատացյալները[27]։

Քննարկվող ժամանակաշրջանում ամենախոշոր ֆեոդալական տնտեսություններից էր էջմիածնի վանքի տնտեսությունը։ Իր ունեցած սեփական կալվածքներին վանքը, օգտվելով արտոնյալ այն վիճակից, որում գտնվում էր նա XV դ., տարեցտարի ավելացնում էր նոր ֆեոդալական տիրույթներ։ Այդ բանը հիմնականում կատարվում էր գնումների ճանապարհով ձեռք բերված հողերի հաշվին։ Էջմիածնի 1428—30 թթ. երեք առանձին կալվածագրերից կազմված է 1430 թ. կալվածագիրը, որը իր մեջ պարունակում է երեք առանձին գործարքներ։ Առաջինը 1428 թ. նոյեմբերի 18-ի կալվածագիրն է, որով էջմիածնի վանահայր պարոն Սմբատի որդի Գրիգոր եպիսկոպոսը մահմեդական ոմն Սաբու Մալիքից գնում է էջմիածին գյուղի մեկ երրորդ մասը կազմող ողջ տարածությունը, որի համար վճարում է հինգ հազար դինար հնչուն արծաթ դրամ[28]։ Երկրորդ վաճառքը կատարված է 1429 թ. հունիսի 12-ին, վաճառողը դարձյալ մահմեդական ոմն Շեյխ-Մուհամադն է։ Այստեղ որպես գնող կողմ Գրիգոր Եպիսկոպոսի հետ հանդես է եկել պարոն Բաբաջանի թոռ պարոն Սեթի որդի պարոն Ղևոնդը։ Պարոն Ղևոնդը էջմիածնի մեկ վեցերորդ մասի համար վճարել է երկու հազար հինգ հարյուր հնչյուն արծաթ դինար[29]։ Էջմիածին գյուղում իրենց հոր ունեցվածքը, որը կազմում էր գյուղի մեկ վեցերորդ մասը Հուսեյին-Կուլի և Փիր-Ալի եղբայրները վաճառել են Գրիգոր եպիսկոպոսին երկու հազար հինգ հարյուր հնչյուն արծաթ դինարով։ Վաճառքը տեղի է ունեցել 1430 թ. հունվարի 26-ից փետրվարի 24-ը[30]։ Գնված այս բոլոր հողերը, որոնց մեջ մտնում էին վարելահողեր, այգիներ և արոտատեղիներ, Գրիգոր եպիսկոպոսը վակֆ է արել էջմիածնի վանքին։

---

25 Տե՛ս Ղ. Փիրղալեմյան, Նստարք Հայոց, Կ. Պոլիս, 1883, էջ 31—32։

26 Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե., 1955, մաս Ա, էջ 565։

27 Տե՛ս Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Երևան, 1958, էջ LXXVII—LXXVIII։

28 Տե՛ս Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ I, էջ 60—61։

29 Տե՛ս նույն տեղում, էջ 61։

30 Տե՛ս նույն տեղում, էջ 62—64։

էջմիածնի վանքի ունեցած անբավ հարստության մասին է վկայում 1431 թ. կալվածագիրը, որի համաձայն վանքի վանահայր Ջալալ բեկի որդի Գրիգոր եպիսկոպոսը Ռուստամ Օրբելյանից գնել է Վաղարշապատ, Աշտարակ, Բաթ-ռինջ, Նորագավիթ, Աղունատուն, Թեղնիս-Քիրաշլու և Մուղնի գյուղերից յուրաքանչյուրից վեց գանգ հողամաս։ Գրիգոր եպիսկոպոսն այս ամենի համար Ռուստամ Օրբելյանին է վճարել 480000 հնչուն արծաթ դինար[31]։ Համաձայն այդ կալվածագրի, Գրիգոր եպիսկոպոսը գնված ողջ մուլքը վակֆ է արել էջմիածնի վանքին։ Ըստ պայմանավորվածության, քանի դեռ կենդանի է վակֆ անողը, նա պետք է լինի էջմիածնի վանքի տնօրենը, վերակացուն և եպիսկոպոսը, իսկ նրա մահից հետո՝ մերձավոր և ավագ վանականներից բարեհոգի մեկը[32]։ Փաստորեն Օրբելյանների քաղաքական առաջնորդը հիշյալ հողային տարածությունների հետ Գրիգոր Մակվեցուն է վաճառել նաև էջմիածնի հոգևոր պետի աթոռը։

Հ. Փափազյանը, խոսելով Գրիգոր եպիսկոպոսի կողմից այդ գյուղերի գնման դրդապատճառների մասին, այն միտքն է հայտնել, որ Ռուստամ Օրբելյանն այդ գյուղերը նվիրել է վանքին որպես սեփականություն և նրանց գնումը Գրիգորի կողմից ձևական բնույթ է կրել[33]։ Առուծախի այս ակտը կատարվել է այն ժամանակ, երբ Օրբելյանների քաղաքական վիճակը բարվոք չէր։ Օրեցօր սաստկացող հալածանքներից ստիպված նրանք հեռացել էին իրենց հայրենի երկրից և դիմում էին նման գործարքների։ Նշված գյուղերը Ռուստամի սոյուրղալներից էին, որոնք նա ստացել էր Իսքանդարից՝ իր ծառայության դիմաց։ Հայտնի է, որ Իսքանդարի դեմ XV դ. 30-ական թվականներին թուրքմեն ազնվականությունը օպոզիցիոն դիրք էր գրավել։ Ի վերջո, 1437 թ. նա զոհ գնաց պալատական դավադրության։ Այդ բանն անշուշտ կռահում էր հեռատես Ռուստամ Օրբելյանը։ Վախենալով, որ վաղ թե ուշ զրկվելու է Իսքանդարի արքունիքում գրաված բարձր դիրքից և կորցնելու է Արարատյան երկրում ու Ամբերդի գավառում ձեռք բերած իր սոյուրղալները, նա այդ պատճառով 1431 թ. դրանք վաճառեց էջմիածնի վանքին։

Էջմիածնի վանքի հետագա հզորացմանն ու հարստացմանը մեծապես նպաստեց 1441 թ. կաթողիկոսական աթոռի վերահաստատումը էջմիածնում։ Կիրակոս Վիրապեցուն հաջորդած Գրիգոր կաթողիկոսը վերաշինում է էջմիածնի վանքը և ավելացնում է նրա կալվածքների թիվը։ Սիմեոն Երևանցու վկայությամբ, էջմիածնի վանքի վարելահողերը, արոտատեղիները և այգիները, որոնց տիրացել էր աստիճանաբար, կազմում էր 2335 սոմար տարածություն[31]։

XIV—XV դարերում վանական հողատիրությունը ընդարձակվում էր նաև երկրից գաղթող մանր ու խոշոր ավատատերերի հողերի և ունեցվածքի հաշվին։ XV դ. պարբերաբար կրկնվող պատերազմներն, ավերածություններն ու թալանը հայ աշխարհիկ ֆեոդալների համար ստեղծել էին կյանքի ու գույքի բացառիկ անապահով վիճակ, որի հետևանքով հայ ազգաբնակչության փախուստը երկրից դարձել էր մասսայական։ Այս կապակցությամբ Աշ. Հովհաննիսյանը գրել էր. «Երկրից փախչողները կամ երկրում մնալով ծանր տուրքե-

31 Տե՛ս նույն տեղում, էջ 67—75։

32 Տե՛ս նույն տեղում, էջ 76։

33 Տե՛ս Հ. Փ ա փ ա զ յ ա ն, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, ԳԱ «Տեղեկագիր», Ե., 1955, № 8, էջ 92։

34 Տե՛ս Սիմէոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, էջմիածին, 1873, էջ 153—154։

յից ու հալածանքներից խուսափել կամեցողները իրենց հողերը էժանագին վաճառում էին եկեղեցուն, երբեմն կամավոր «վախքմամբ» անում եկեղեցուն իրենց դույքերը և կամ հրաժարվում անձնական իրենց ազատությունից՝ ճորտագրվելով եկեղեցուն»[36]։ Ի հաստատումն իր այս մտքի Աշ. Հովհաննիսյանը վկայակոչում է Զաքարիա Սարկավագի հին վավերագրերից քաղած ուշագրավ այն քաղվածքը, թե «ամենայն ոք ցանկայր տալ զինչս և ստացուածս՝ և արարրս, ոմանք այգի, ոմանք արարք, և ոմանք գիւղ, ոմանք անասուն, և ոմանք դրամս, ոմանք դինքեանս և այլք գորգիս, ոմանք անօթս եկեղեցւոյ և այլք զինչս մարմնորս»[37]։

1417 թ. Դանձասարի վանքում Մատթեոս Մոնոզոն գրիչը դառնացած գրում է. «Քանզի այն, որ կայր մնացեալ շառաւիղ տանն Բիւրթելեանց՝ գնաց փախրստական ի Տունն Վարց, որոյ անուն Սըմբատ կոչիր, և անդ՝ ի յոտարութեանն վախճանեցաւ։ Եվ մնացեալ Բ. որդիք իւր եկին ի հայրենիս իւրեանց, և ոչ են տեարք իշխանութեանն իւրեանց, այլ ընդ ձեռամբ անօրինաց»[37]։ Երկրից հալածված Օրբելյան իշխանների կալվածքների մի մասն անցել էր նույն տան հոգևոր ֆեոդալների հսկողության տակ։

Այդ բանը տեսնում ենք նաև Քեղվա ձորում և նրա շրջակայքում իշխող Զաքարիա Հավուց Թառեցու և նրա տոհմի ազատորդիների կապակցությամբ։ Սրանց կալվածքների մի մասը բռնագրավվել էր Բեյթ-ուլ-մալի կողմից։ 1489 թ. Զաքարիային հաջողվում է 5000 դինար հաշտության գին վճարելով մուսուլման կառավարիչ Քամալ էդ-դին Արդին բեկից ետ ստանալ իր հայրենի կալվածքներից Մանկուս, Ավանիկ, Կուդիս, Կըղել վանք, Կոխդ, Դոնիս, Սուրբ Սարդիս գյուղերը և Կոտունց վանքն ու Ավանասարի ագարակները[38]։ Զաքարիա վարդապետը հիշյալ գյուղերի գնման ակար ձևակերպում է իր անունով։ Զաքարիայի կողմից կատարված այդ գործարքը Ջամբռի հեղինակը բնութագրել է այսպես. «որպես թե վանքս առնոյր զայսքան մուլք, թեպէտ յանուն վանքին վախմ ոչ դրեցուցանէր ի միամտութենէն»[39]։

Ասպարանի սուրբ Նշան վանքում 1497—1507 թթ. շարադրված մի կոնդակով գյուղի քահանաները նզովք են կարդում նրանց հասցեին, ովքեր կփորձեն տիրանալ գյուղից հեռացողների ունեցվածքին։ Ինչպես ճիշտ նկատել է Լ. Խաչիկյանը, վանքն, ուրիշներին արգելելով, իրեն է իրավունք վերապահում սեփականացնելու անտեր մնացած կալվածքները, նկատի ունենալով հայ եկեղեցական կանոններով հաստատված այն սկզբունքը, թե անժառանգ մնացածների գույքը պատկանում է եկեղեցուն[40]։

Վանքապատկան հողատիրության ընդարձակման մյուս միջոցը գյուղական համայնքների հաշվին ձեռք բերված հողերն էին։ Գյուղական համայնքի հաշվին ստացված հողերը լինում էին ինչպես նվիրատվություններ, այնպես էլ գնումների ճանապարհով և բռնությամբ ձեռք բերված հողերը։ Այս հար-

---

36 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1, Երևան, 1957, էջ 308։

36 Զաքարիա Քանաքեռցի, Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1873, հատ. 3, էջ 15։

37 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 194։

38 Տե՛ս Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ 1, էջ 82—85։

39 Սիմէոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, էջ 277։

40 Տե՛ս Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 78—79։

ցին անդրադարձել է Լ. Խաչիկյանը[41]։ Գյուղական համայնքի համաձայնությամբ եկեղեցուն արվող նվիրատվությունները լինում էին արտեր, այգիներ, ջրաղացներ և այլն։ Այսպես Աղու գյուղի համայնքն իր նախաձեռնությամբ վերաշինում է ավերված սուրբ Հովհաննեսի վանքը և որպես «լուսագինն» համայնքին պատկանող հողային տարածությունից վանքին է նվիրում մի արտ[42]։ 1470 թ. Աղթամարում գրված մի ձեռագիր հիշատակարանից պարզվում է, որ Արբերդ գյուղի համայնքի անդամները Արբերդի վանքին են նվիրել Ճիտկանց, Ջալուի, Վախուանց և Ներկարարենց արտերը[43]։

XV—XVI դարերին վերաբերող անթվագիր մի փաստաթղթի համաձայն Վարդապետիկ վանքը գյուղական համայնքից նվեր է ստացել Խաչի արտը, Ծուռ արտը, Ուռուտը, Շապխոնց քռեն, Ավգերանց արտը և Ավգերենց թումբ արտը[44]։ Համայնքի կողմից տրվող նվիրատվությունները ոչ միշտ էին կատարվում նրա հոժար կամքով։ Այսպես, Զաքարիա կաթողիկոսի ժամանակ Աթանաց գյուղի համայնքն իր վրա դրված անեծքի թուղթը օրհնանքի վերածելու համար ստիպված է եղել գյուղական համայնքին պատկանող հողերից մի արտ նվիրել սուրբ Աստվածածին վանքին[45]։

Ճիշտ է, վանքերն ունեին իրենց սեփական միջոցները, գործիքները, քաշող ուժն ու վարձկան մշակները, սակայն ընդարձակ այս կալվածքները, այգիները, բանջարանոցները մշակելու, ինչպես նաև վանքերին կից այլ տնտեսություններում աշխատելու համար վանքերն ու խոշոր հոգևոր ֆեոդալները շահագործում էին նաև գյուղացու աշխատանքը։ Գյուղացու աշխատանքը շահագործում էր ձիթհաններում, արհեստանոցներում, ձկնորսարաններում, ջրաղացներում և հասութաբեր այլ օբյեկտներում։ Այն վանքերը, որոնք ունեին «սեփական» գյուղեր, օգտագործում էին գյուղացու կոռային աշխատանքը։ Կոռվոր գյուղացին պարտավոր էր տարվա ընթացքում մի քանի օր ձրի աշխատել հոգևոր ֆեոդալին և վանքերին պատկանող տնտեսությունում։

Այսպիսով, XIV—XV դարերում վանքերի և հոգևոր ֆեոդալների հսկողության տակ էին անցնում հողային ընդարձակ տարածություններ, այգիներ, անդաստաններ և եկամտաբեր այլ օբյեկտներ։ Վանական և հոգևոր ֆեոդալական տնտեսությունն աճում և ամրապնդվում էր աշխարհիկ ֆեոդալների և մեծահարուստների նվիրատվությունների, երկրից գաղթողների հողերին տիրանալու, գնումների և գյուղական համայնքի նվիրատվությունների ու նրանց հողերի բռնագրավման ճանապարհով։ Քննարկվող ժամանակաշրջանում հոգևորականության ազդեցիկ ներկայացուցիչները, օգտվելով իրենց արտոնյալ դրությունից, աշխարհիկ հողատիրության հաշվին ոչ միայն ընդլայնում էին իրենց կալվածքները, այլև իրենց ձեռքն էին վերցրել թուլացած ֆեոդալական տների կառավարման ղեկը։

XIV—XV դդ. Հայաստանի տերիտորիայում մղվող պատերազմները ծանր հարված հասցրին երկրի բնակչությանը, որի մի մասը ոչնչացվեց, իսկ

---

41 Տե՛ս Լ. Խաչիկյան, 14—15-րդ դդ. հայկական գյուղական համայնքի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 8։

42 Տե՛ս Գ. Սրուանձտյան, Թորոս, աղրար, մասն Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 306—307։

43 Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ. էջ 304։

44 Տե՛ս Լ. Խաչիկյան, 14—15-րդ դդ. հայկական գյուղական համայնքի մասին, էջ 122։

45 Տե՛ս նույն տեղում, էջ 118։

մյուս մասը ստիպված էր գաղթել երկրից։ Անլուր հալածանքների հետևանքով հայկական իշխանական տներից մի քանիսը չքացան ասպարեզից, իսկ մյուսները իրենց գոյությունը պահպանելու համար ապավինեցին Հայաստանի անմատչելի լեռներին՝ զորավիգ ունենալով հայ եկեղեցու հովանավորությունը։

Պատմական այս պրոցեսը, որը սկսվել էր դարեր առաջ, իր զարգացման գագաթնակետին հասավ XIV դ. և ավելի խորացավ XV դ.։

ПУТИ РАСШИРЕНИЯ МОНАСТЫРСКОГО ЗЕМЛЕВЛАДЕНИЯ В XIV—XV вв.

Г. Е. КИРАКОСЯН

Резюме

Монастырское землевладение в XIV—XV веках значительно расширилось. Этому в основном способствовало то обстоятельство, что духовенство находилось в привилегированном положении, а монастырские владения не облагались налогом и были неприкосновенны. С целью сохранения своих владений князья вынуждены были отдавать их под эгиду церкви. В отмеченный период монастырское землевладение расширялось следующими путями:

1. Приношение монастырям со стороны феодалов.
2. Скупка земель и других доходных объектов.
3. Присвоение монастырями владений крупных и мелких феодалов, не выдерживавших тяжелого гнета и покидавших страну.
4. Приобретение общинных земель, отходящих к монастырским, а также приношения со стороны общин или даже захват общинных земель с помощью силы.